



SINCE 1997
Komitas.ca
FUNERAL COMPLEX

Always standing by our community

PRE-PLANNING WITH 0% INTEREST
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS

T 514.331.0400

horizon

| HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français |

ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 41 / No.3 (2085), 12+4+4 էջ / \$1.75

ՅՈՒՆԻ 17 / 17 JUNE / 17 JUNE 2019

Օնթարիոյի խորհրդարանին մէջ յիշատակուեցաւ Հայաստանի Հանրապետութեան կերտման 101-ամեակը



Կարդալ էջ 10

Մոնթրէալի Ս. Յակոբ ազգային վարժարանի
հանգանակային երեկոյթին գոյացաւ 507 839 տոլար



Կարդալ էջ 4

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:

- facebook.com/pages/horizonweekly
- [@horizonweekly](https://twitter.com/horizonweekly)
- horizonweekly
- [YouTube – Horizon Weekly TV](https://www.youtube.com/Horizon_Weekly_TV)

ՀՅԴ-ի
ճախաճեռնութեամբ Արան
Մանուկեանի ծննդեան
140-ամեակին նուիրուած
յուշակոթող
տեղադրուեցաւ
Սարդարապատի մէջ

Սարդարապատի յուշաճամալիբին մէջ, Մայիսի 28-ին հանդիսաւոր արարութեամբ բացումը կատարուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադիր, պետական եւ քաղաքական նշանաւոր գործիչ Արամ Մանուկեանի ծննդեան 140-ամեակին նուիրուած յուշակոթողին:

ՀՅԴ-ի այս նախաձեռնութիւնը իրականացաւ համագործակցութեամբ Սարդարապատի թանգարան, հայոց ազգագրութեան եւ ազատագրական պայքարի պատմութեան թանգարանի տնօրինութեան հետ:

Ծրագիրը իրականացաւ ՀՅԴ Գանատայի կառոյցի հովանաւորութեամբ եւ Վարուժ Լափոյեանի (Թորոս Թորոս) մեկենասութեամբ:

Ցուշարձանը տեղադրուած է զանգաշարակին մօտակայքը: Ցուշարձանի խորհրդանիշներն են՝ սուրբ, արծիւները, յաւերժութեան նշանը:



2018 PILOT
MSRP
STARTING FROM
\$40,390*

2018 PILOT SHOWN

* Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA
GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777

www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian





MARCHÉ ADONIS


Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



Արամ Մանուկեանի հոդ-մատունքը ամփոփուեցաւ Սարդարապատի մէջ



ԵՐԵՒԱՆ.- Սարդարապատի հերոսամարտի յուշահամալիրին մէջ, 28 Մայիսին տեղադրուած Արամ Մանուկեանի արձանը կարելի է անուանել յուշակոթող-սրբատեղի, ուր Ուրբաթ, 7 Յունիսին ամփոփուեցաւ պետական գործիչին եւ Հայաստանի Հանրապետութեան հիմնադիրին հող-մասունքը: Արամ Մանուկեանի 140ամեակին նուիրուած յուշակոթողին մէջ մասունքը զետեղելու արարողութիւնը կատարուեցաւ Արմաւիրի մարզի առաջնորդ Սիոն եպս. Աղամեանի ձեռամբ: Ներկայ էին դաշնակցականներ, ՀՄԼՄականներ եւ Մանուկեանի յիշաստակին հաւատարիմ հայորդիներ:

Նախքան Առաջին Հանրապետութեան հիմնադիրին մասունքը յուշակոթողին մէջ զետեղելը, ելոյթով եւ երախտիքի խօսքով հանդէս եկաւ յուշակոթողի մտայլացման հեղինակ եւ նախաձեռնող Յակոբ Ճամպաղեան:

Ըստ Ճամպաղեանի՝ թէեւ Առաջին Հանրապետութեան անկախութիւնը եղաւ կարճատեւ, սակայն ազատ ու հայավայել ապրելու ոգին միշտ վաս եւ անխաթար մնաց հայ ժողովուրդի տարասափիւր հատուածներուն եւ հայրենիքի մէջ: «Պատահական չէր, որ 1988թ. փետրուարեան օրերին հայ ժողովուրդը, ականջալուր Արամ Մանուկեանի վաւերական կտակին, քաջութիւն ունեցաւ փշերելու իրեն շղթայած եւ ազատութիւնը բռնարարած համայնավար բռնակալութեան կապանքները՝ ստեղծելով հայաստանի ու Արցախի անկախ հանրապետութիւններ», ըստ Ճամպաղեան:

Սարդարապատ յուշահամալիրի Հայոց ազգագրութեան եւ ազատագրական պայքարի պատմութեան ազգային թանգարանի տնօրին Կարէն Արքստակէսեան շնորհակալութիւն յայստեց մտայլացման հեղինակին Յակոբ Ճամպաղեանին, յուշակոթողի բարերարին՝ Թորոսների մօտ Հայաստանի Հանրապետութեան պատույ հիւպատու Վարուժան Լափոյեանին, այս մտայլացմար իրականացներու համար, Հայաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանին՝ հանդիսութեան աշակցութիւն ցուցաբերելուն համար:

ՀՅՇ Հայաստանի Գերագոյն մարմինի անդամ Շաղիկ Մարտուխեան ըստ, որ այսօրուան իրադարձութիւնը իր տարամարանական բացարարութիւնը ունի՝ Արամ Մանուկեան անձը հայութեան հաւաքական ձգտումներու լաւագոյն խորհրդանշներէն է:

Ան յիշեցուց, որ 1919ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 9րդ Ընդհանուր ժողովին կողմէ որդեգրուած Անկախ եւ Միացեալ Հայաստանի կերտման ծրագիրի վերջնանպաստակը այսօր ալ ամրագրուած է ազգային կուսակցութեան կարեւորագոյն փաստաթղթերուն մէջ: «Այս խորհրդանշական վայրում արժէ, որ Սարդարապատի մէր հերոսների, Հայաստանի հիմնադիրի յուշարձանի առջեւ մենք եւս մէկ անդամ հաւաստենք մեր հաւատարմութիւնը հայութեան անանց արմէքներին եւ երազանքներին: Փառք ու պատիւ պայքարի մէջ սրբագրուած եւ պայքարի ունակ մեր բոլոր սերուներին, մեր բոլոր հերոսներին», իր ելոյթը աւարտեց Շաղիկ Մարտուխեան:

Զինուրական համազարկով եւ հոգեւորականներու իրականացուցած յատուկ կարգով Արամ Մանուկեանի հող-մասունքը զետեղուեցաւ յուշակոթողին մէջ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Հայ երաժշտութեան հանճար Կոմիտասի ծննդեան 150-ամեակին առիթով

«Ինչպէս Մաշտոցը գտաւ մեր լեզուի բաղադրիչները, նրա հնչիւնակազմը եւ դա արձանագրեց այրուենով, նիշդ այսպէս էլ Կոմիտասը գտաւ մեր լեզուի բաղադրիչներակազմը մէկ այլ իւրատեսակ այրուենով:»

Պարոյր Սեւակ

Կոմիտասի ծննդեան 150-ամեակի յորեկեանին առիթով, կ'արժէ վերյիշել Պարոյր Սեւակի վերեւ նշուած հաստատումը, որ լաւագոյնս կ'արժեալորէ հանճարեղ Կոմիտասի երաժշտական ստեղծագործական ժառանգութիւնը:

Հայ հոգեւոր, ժողովրդային, գասական եւ գեղկական երաժշտութեան հաւաքագրուումն ու անդարձ կորուստէ փրկելու առաքելութիւնը վերապահուած էր հայ երաժշտութեան մարգարէ Կոմիտասին:

Մէր երաժտութեան հարուստ գանձարանին մէջ երբեք տեղ պիտի չգտնէին հայ գիւղացիին, աշխատաւորին, երկագործին եւ գութանավարին հաշեցուցած հոռովկելները, եթէ չյայտնաբերուէին շնորհիւ Կոմիտասի: Հոռովկելը՝ գաւաններու եւ գիւղական բնակավայրերու հայութեան հոգեկերտուածքի բաղականի բաղագրիչն էր, որովհետեւ Հոռովկելը հոգեւոր արարողակարգի նման Բարձրեալին հետ երկխօսութեան ծէս էր եւ իր մէջ կը պարփակէր աղօթք, փառաբանութիւն, օրհնութիւն եւ գոհաբանութիւն: Կոմիտասի յայտնաբերած հոռովկելներուն շնորհիւ կեանք առին մաճկալն ու խոփի, արօն ու գութանը:

Շնորհիւ երաժշտագէտ Կոմիտասի, այսօր հայ մշակոյթին մէջ հպարտութեամբ իր տեղը գրաւած է ազգագրական բիւրեղ երգարարուեալը, որ գերծ է օտար ազգեցութիւններէ, զուտ ազգային է, հայկական է:

Երազներ ունէր, որոնք ընդհանուց հայութեան հոգեւոր երաժշտանոցներ, հայ դպրոցներու մէջ երգեցութեան դասապահներ յատաջանցներու ծրագիրներ:


Ինք եղաւ առաջինը, որ հանդերձաւորեց մեր երաժտութիւնը գեղագիտական խորքով ու կառուցուածքով: Ինքն էր, որ բացայացեց հայկական ծայնաշարի կառուցուածքը եւ անժիտելի ներգրում ունեցաւ հայկական խազագիտութեան վերծանման գործին մէջ:

Կոմիտաս կեանք տուաւ հայ երգի առանձնայատկութիւններուն, յատկապէս գտելով հայկականը արաբական, թրքական, պարսկական եւ քրտական ազգեցութիւններէն: Հայաստաննեայց Առաքելական եկեղեցւոյ պատարագը բազմաձայնի վերծանելու եւ վերամշակելու ուղղութեամբ երկար տարիներու անխոնջ աշխատանքին լուսաւուեցաւ:

Իր հայրենանուէր գործունէութեան ընթացքին ան միաժամանակ դարձաւ եւ բանահաւաք, եւ երաժշտահան, եւ ազգագրագէտ, եւ մանկավարդ: Իր շունչին տակ կրթուեցաւ հայ երաժշտագէտներուն նոր սերունդ մը, եւ այդ սերունդը արդասւուեցաւ Բարսեղ Կանաչեանով:

Հայ երաժշտութեան այս հանճարը անմասն չմնաց Հայոց Ցեղասպանութեան հետեւանքներէն: Ականատես գառնալով իր ժողովուրդի գողովթային՝ ապրեցաւ խոր ու անբուժելի հոգեցնում եւ կեանքի մնացեալ հանգրուանին ընդիշտ լուց հոգեխոցուած առաքեալը:

Հայ ժողովուրդը երբեք երախտամու չի կրնար ըլլալ Կոմիտասին հանդէպ, հայ մարդ, որ հայութեան պարգևեց ազգային երգարարուեալ ժառանգութիւնը:



Ghadir
Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

RE/MAX West Realty Inc., Brokerage
Independently Owned and Operated

Anto Keledjian
Sales Representative
Residential & Commercial
Dir: (416) 930-2686
Bus: (416) 588-6777
570 Bloor St. W., Toronto, ON M6G 1K1
ANTOK13@GMAIL.COM • WWW.TORONTOSOLD.CA

SŪQ

2 Champagne Drive # B9
Toronto, ON M3J 2C5
Tel: (416) 661 8998
www.suqkitchen.ca

ANI
Ristorante

905.761.6484
1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative
Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbedi@hotmail.com
www.suttongroupadmiral.com
Each Office is Independently owned and Operated

hearing aid source

Andre Ayvazyan HIS BAS

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON M1R 4B9

Gary Chahinian President, Broker of Record
416-258-8892
Gabriel Chahinian Sales Representative
647-580-5818
The Diamond Realty

I.D.A. Part of the **Realty** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Tel.: 416.449.2040
Fax: 416.449.2048

ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ
Middle Eastern Pizza Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգային վարժարանի «Վ. Եւ Ա. Սարաֆեան նախակրթարանի երեկոյթականի հանգանակային երեկոյթին գոյացաւ 507 839 տոլար

Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգային վարժարանի ընդունելութեան երեկոն տեղի ունեցաւ 9 Մայիս 2019-ին, վարժարանին «Տիգրան եւ Տիգրան Հաճէթեան» մարզարանէն ներս, 200 ազգայիններու ներկայութեամբ:

Երեկոն սկսաւ Գերշ. Տ. Սուրէն Սրբազն Արք. Գաթարոյեանի սեղաններու օրհնութեամբ:

Խօսք առաւ Ս. Յակոբ եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Վարչական խորհուրդի անդամ պր. Թորոս Պապիկեան, որ հաստատեց. «Այսօր հոս հաւաքուած ենք ի նպաստ հայ գպրոցին, որուն առաքելութեան հանդէպ մեծ հաւատք ունինք», ինչպէս նաև՝ «Հայ աշակերտ Սուրէն Յակոբ ազգային վարժարանէն ներս կը ստանայ ուսման բարձր մակարդակ, ազգային դաստիարակութիւն հայաշունչ եւ ապահով միջավայրի մը մէջ»: Ան ուրախութեամբ յայտարարեց, թէ բարերարներուն նուիրատուութեամբ նորոգուած են գպրոցի զանազան բաժինները, կառուցուածքի, կահ-կարսահներու, դասարաններուն կամ ընդհանրապէս գիտարուեստի (Technology) վերաբերեալ նորոգութիւններով, ապաւելցուց. «Մենք ստիպուած ենք քայլ պահել ընդհանուր յառաջխաղացքին հետ, որպէսզի կարենանք մեր գպրոցի կրթական ծրագիրը միշտ թարմացնել՝ ներմուծելով օգտակար նորութիւններ»: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաններուն եւ նուիրատուններուն՝ իրենց սրտաբուխ եւ առաստածենն նուիրատուութեանց համար, որոնք կ'օժանդակեն դպրոցի առաքելութեան անխափան ընթացքին:

Պր. Պապիկեան անդամականաց գոյացին 45-րդ ամեակին առիթով Սուրէն Յակոբ եկեղեցւոյ Հոգաբարձու-

թեան, գործակցաբար Սուրէն Յակոբ Ազգային վարժարանի Վարչական խորհուրդին ստեղծած Դրամահաւաքի Կազմակերպիչ Մարմնին, որ կը գրադի դրամահաւաքով ամբողջ տարրուան լինթացքին: Ան անդրագարձաւ Կազմակերպիչ Մարմնին անխոնջ աշխատանքին, դպրոցի շրջանաւարտները համախմբելու գործին եւ Մարտ 28-ին,

շրջանաւարտներու հաւաքոյթով մը Սուրէն Յակոբ Ազգային Վարժարանի Շրջանաւարտներուն (Alumni Association) մեկնարկին եւ աշնան տեղի ունենալիք եղանակակիչ telethon-ին:

Պր. Պապիկեան յայտարարեց այս տարեցանին յարդ կատարուած նուիրատութիւններու:

1. Բաստրմածեան հիմնադրամէն՝ \$180,000, մեր Իրած-ներու ծրագրին համար

2. Տէր եւ տիկ. Կարօ եւ Անի Տօնոյեաններէն՝ \$100,000, երրորդ յարկի ուսուցչարամին նորոգութեան համար

3. Մեր 2003-ի շրջանաւարտներ Ալեքս Պեղծեանին եւ Շիրազ Գասարձեանին 24 հատ bean bags հանգստաէտաթուներ, նախակրթարանի դասարաններուն համար

4. Տէր եւ տիկ. Կարօ եւ Լենա Գատեաննէն՝ \$6,000, որպէս կրթան-պատս սանուկի մը

5. Առաքելեան Ընտանիքի Հիմնադրամէն՝ \$3,000, որպէս կրթանպատս

Պր. Պապիկեանին խօսքէն ետք ցուցադրուեցաւ տեսերիզ մը, որ կը ներկայացնէ վերջին տարիններու գպրոցէն ներս եղած բարելաւումները:

Տեսերիզէն ետք գպրոցի տնօրէնուէի Լոռի Ապրաքեան եւ հաշուապահական գրասենեակի պատասխանատութամար եաղձեան-Օլթաճին ներկայա-

ցուցին դպրոցին ապագայ ծրագիրները: Օրդ. Ապրաքեան նշեց. «Հպարտորէն կը յայտարարանք, թէ այս տարի մեր վարժարանը կը տօնէ իր 45-րդ տարեդարձը աւելի քան 700 հայ աշակերտներով: Եթէ վարժարան կրցած է գոյատեւել վերջին 45 տարիններուն ընթացքին, ապա զայն կը պարտինք մեր գաղութի անդամներուն նիւթական եւ բարոյական նեցուկին»:

Անոնք միասնաբար ներկայացուցին նոր ծրագիրներ, որոնք առիթ կուտան մեր աշակերտներուն, որ կարենան յաջողութիւն գտնել այս դարու պայմաններուն մէջ: «Կարեւոր է առիթներ ստեղծել, որպէսզի կարենան զարգացնել իրենց կարողականութիւնն ու ստեղծագործութիւնները»:

Ներկայացուեցան հետեւեալ 4 ծրագիրները.

- Լուսանկարչական անկիւնի ստեղծում իր բոլոր արհեստագիտական կազմածերութիւն:

Որքան հարուստ ծրագիրներ կարելի է յաջողցնել նման դասարանի եւ գործիքներու միջոցաւ, ծրագիրներ, որոնք կը զարգացնեն մեր աշակերտներուն գիտելիքները եւ միեւնոյն ատեն առիթ կը ստեղծեն իրենց փոխանցելու բարոյական արժէքներ:

- Աշակերտական ձայնասփոռումի արհեստագիտական լիցիկ, հարկ եղած սարքաւորումներու

Համագործակցութիւնը անհրաժեշտ արմէք մը ըլլալով ապագային համար, այս նոր դասարանը կ'ընծայէ առիթներ, որպէսզի աշակերտները կարենան միասին աշխատի եւ զարգանալ: Մեր ուսումնական ծրագիրը յայնածաւալ եւ հետաքրքրական է, երեք լեզուի դասաւանդու-

թեամբ: Այսպիսի դասարանի մը ընդմէջէն մեր աշակերտները կրնան ապրիլ այդ ծրագիրը մանկավարժական նոր մօտեցումներով եւ նորարարական ողիով (esprit innovateur): Կարեւոր է յարգել իւրաքանչիւր աշակերտի անհատական պէտքերը, եւ այսպիսի միջավայր ստեղծելով կը ծառայինք այդ նպատակին:

Դասերու կողքին, աշակերտները գլորց կու գան նաեւ յարաբերելու տարեկելից ընկերներու հետ եւ անոր ընդմէջէն կերտելու իրենց ինքնութիւննը:

- Ճաշարանի հիմնական նորոգութիւններ:

Անշուշտ թէ, որպէս հայ, կ'անդրագունանք, թէ ճաշը որքան կարեւոր բաժին մըն է ընկերային կեանքէն ներս: Ուստի գլորցին ճաշարակը այն վայրն է, ուր աշակերտները կը միանան իրենց ընկերներուն, միասին ապրելու համար հաճելի եւ ներշնչող միջավայրի մը մէջ: Բայց մեր ծրագիրը չի սահմանափակուիր միայն գեղեցկացներով միջավայրը: Նոր ճաշարակը պէտք է նաեւ բազմանպատակ ըլլայ եւ թոյլ տայ, որ ուսուցիչներ կարենան հօն դասաւանդել նոր միջոցներով, օրինակ թուարանութեան դաս մը, կամ հայկական աւանդութիւններ:

- Վարժարանի բակի բարենորոշութիւն:

Գօսանքի ժամը անհամբեր սպասուած պահ մըն է բոլոր աշակերտներուն կողմէ: Եթէ մտածէք, թէ որքան յիշատակելի վայրկեաններ անցուցած էք հոն ձեր մանուկ հասակին, կրցած էք ամրապնդել ձեր բարեկամութիւնները, ոտնագնդակի կամ ընկերովի խօսակցութեան, պարանի կամ վնդելու միջավայրը: Նոր ճաշարակը պէտք է նաեւ բազմանպատակ ըլլայ եւ թոյլ տայ, որ ուսուցիչներ կարենան հօն դասաւանդել նոր միջոցներով, օրինակ թուարանութեան դաս մը, կամ հայկական աւանդութիւններ:

- Վարժարանի բակի բարենորոշութիւն:



Մոնթրէալի Ս. Յակոբ ազգային վարժարանի «Վ. Եւ Ա. Սարաֆեան նախակրթարանի եւ «Բաստրմածեան երկրորդականի հանգանակային երեկոյթին նուիրատուներու

Famille Chaké Gunjian	\$100,000
Croix de Secours Arménienne - Section Sossé de Montréal	\$60,000
Saro & Tamar Der Bedrossian	\$50,000
Fondation Pasdermajian	\$45,000
Arto & Alice Markarian	\$30,000
Krikor Der Ghazarian	\$25,000
Association Age d'Or du Centre Communautaire Arménien de Montréal	\$20,000
Croix de Secours Arménienne - Section Shoushi de Laval	\$15,000
Fondation de la Croix de Secours Arménienne du Canada	\$14,000
John Vartan Balian	\$12,000
Walter & Holly Assatoorian	\$10,000
Arek Christine Karine Alik Katya Markarian	\$10,000
Sona Maroutian	\$10,000
Le Club de Bridge de Centre Communautaire Arménien de Montréal	\$7,000
Dr. Armen Paola Saro Alex Aprikian	\$5,000
Diana Hadjetian	\$5,000
Rita Ohanian	\$5,000
Arto & Tamar Oltaci	\$5,000
Mike & Karine Guiragossian	\$3,000
Manuel & Dre Taline Keusseyan	\$3,000
Artin & Annie Majakian	\$3,000
Friday Night Tennis & Curling	\$2,019
Sako & Manane Abrakian	\$2,000
Herair, Ara Aghjayan	\$2,000
Centre Armenie	\$2,000
Chahé & Barbara Derghazarian	\$2,000
Kevork & Talar Kalloghlian	\$2,000
Anahid Markarian	\$2,000
Amani Sawaya, Executive Director, CIBC Private Wealth Management	\$2,000
Rosa Truzo, Market Vice-President, CIBC	\$2,000
Krikor & Christiane Abrakian	\$1,000
Fondation de la Famille Arakelian	\$1,000
Groupe Arslanian	\$1,000
Toros & Annie Babikian	\$1,000
Jerry & Taline Devletian	\$1,000
Noubar & Alice Deyirmendjian	\$1,000
Fondation Famille Manouk Djoukhadjian	\$1,000
Shant & Alina Donabedian	\$1,000
Fondation de la Société des Arméniens d'Istanbul	\$1,000
Philippe & Kayane Froundjian	\$1,000
Karl Guiragossian	\$1,000
Melanie Guiragossian	\$1,000
Libarid & Angela Guluzian	\$1,000
Hamazkayin-Assocation Éducation	

Տեղի ունեցաւ Համազգային «Անի» պարախումբին «Մենք Արցախն ենք» տարեկան ելոյթը



Կիրակի, 2 Յունիս 2019-ին, երեխյան ժամը 7:00-ին, Centre Leonardo da Vinci սրահին մէջ տեղի ունեցաւ Համազգայինի Մոնթբէալի «Սանահին» մասնաճիւղի «Անի» պարախումբի «Մենք Արցախն ենք» տարեկան ելոյթը, գեղարուեստական դեկավարութեամբ արուեստագէտ ծօ Աւագեանի:

Ելոյթը բաժնուած էր երկու մասի: Առաջին մասը սկսաւ «Ծիրակ» ժողովրդային երկսեռ պարով, որմէ ետք բարի գալուստի խօսք արտասանեցին Բայիկ Խաչերեան (Հայերէն) եւ Անի Չուխածեան (Փրանսերէն): Անոնք իրենց խօսքին մէջ յայտնեցին, թէ Հայաստանի եւ աշխարհասփիւռ հայութեան բոլոր հատուածները ձեռք ձեռք տալով կերտեցին Արցախի պետականութիւնը, որոն պահպանումը մէր բոլորին պարտքն է: Անոնք շեշտեցին, որ իրենք ալ, որպէս պարախումբ, իրենց ձեռք զօրավիզ կը կանգնին Արցախի հերոս ժողովուրդին: Իրենց խօսքին աւարտին շնորհակալութեան խօսք ուղղեցին պարուսոյցին, պարախումբի յանձնախումբին եւ բոլոր անոնց, որոնք սատարեցին սոյն ձեռնարկին յաջորդութեան:

Բացման խօսքէն ետք յաջորդարար ներկայացուեցան «Նարէ նարէ» արդի երկսեռ պարը, «Ուզուն տարա» հարսի պարը՝ մենակատարութեամբ Մեղեդի Պարտիզապանեանի, «Լեզկինքա» տղոց վրացական պարը, «Հայ Հայաստան» աղջիկներու ժողովրդային պարը, «Տէլ Եաման» պարը նուիրուած Շարլ Ազնաւորի եւ Արցախի զոհուած հերոսներուն, մենակատարութեամբ՝ Աննա Գուլուեանի, Մեղեդի Պիլէմճեանի եւ Նարինէ Վարդիկաւեանի: «Քոչարի» հայկական աւանդական պարով կերջ դուանական առաջին մասը:

Կարճ դադարէ մը ետք սկիզբ առաւ երկրորդ մասը, որուն ընթացքին ներկայացուեցան «Եարիսուշտա» հայկական աւանդական պարը, «Քանին փուրջանիմ» նազ պարը, մենակատարութեամբ՝ Աննա Գուլուեանի, Մեղեդի Պիլէմճեանի եւ Մեղեդի Պարտիզապանեանի, «Զարթօնք» աղջիկներու աւանդական պարը, «Սեւան» տղոց ժողովրդային պարը եւ «Հայոց աղջիկներ» աղջիկներու աւանդական պարը ժողովրդային պարը:

Երկրորդ մասի վերջին պարն էր «Դժմաճազ» ժողովրդային, աւանդական եւ ճագ պարերու փունջը, որ միախառնութեամբ աւանդականի, ժամանակակիցի եւ ժողովրդականի՝ գեղեցիկ

պատկեր մը ստեղծած էր:

Ելոյթին փակումը տեղի ունեցաւ «Կարմիր, կապոյտ, ծիրանագոյն» երգով եւ բոլոր անդամներուն բեմ տողանցելով ու խոնարհութեամբ: Խոնարհութեան մասնակցեցան նաեւ գեղարուեստական դեկավար ծօ Աւագեանն ու յանձնախումբի անդամները, որոնք գեղեցիկ ծաղկեփունջներ նուիրեցին պարողներուն եւ դեկավարին:

Մոնթրէալի արուեստական եւ մշակութասէր հանրութիւնը վայելեց աղգագրական եւ հայրենասիրական պարերուն ներշնչող փունջ մը, որոնցմով կը ցոլար գեղարուեստական դեկավարին բծախնդիր մօտեցումն ու հայկական պարի հանդէպ իր մասնագիտական ընկալումն ու հետեւաբար՝ անոնց փոխանցումը նոր սերունդի մէր երիտասարդերիտարդուհիներուն: Այս բոլորին առընթեր յստակ է, որ կային քուլիսներուն ետին աշխատողներ, յատկապէս՝ յանձնախումբի անդամները, որոնք ամենայն լրջութեամբ հետեւած էին ելոյթի բոլոր մանրամասնութիւններուն եւ օժանդակած ու սատարած, որպէսզի սոյն ելոյթը յաջողութեամբ պատկուի: Փուլիսային այս աշխատանքին մաս կը կազմէին նաեւ Սերժ Եսայեան եւ Ռուբէն Սարգսիսեան, որպէս երաժշտութեանց համադրող, Սերժ Եսայեան նաեւ ստանձնած էր ելոյթին տեսերիզային արձանագրութիւնը, նկարահանումը՝ Կարօ Շէօմէլեանը, իսկ յայտագրի գրքոյլը պատրաստած էին Սերորպ Պերէճիքանն ու Շողիկ Ազարիկեան-Ադամեանը:

Պարտզներուն գեղեցիկ, աշխոյժ եւ կայտառ, ինչպէս նաեւ աղջիկներուն հեղաձկուն եւ դիւթական քնչշանքով կատարումին կը միանար տարազներուն գրաւչութիւնն ու հայկական նախշազարդերով օժտուած զգեստները, որոնց մտայլացումը կը պատկանէր Լինա Խաչերեանի, իսկ աղջիկներուն շպարումը ստանձնած էր Սոնա Տէլիմէնճեան:

Նշնք, որ բեմին յետսամասը տեղադրուած էր գեղեցիկ պաստառ մը՝ «Մենք ենք մեր սարելը» յուշարձանով, պարողներով, հայկական գորգով ու նուռով գեղանկար մը:

Աւարտին գնահատանքի եւ շնորհական խօսքով հանդէս եկաւ «Սանահին» մասնաճիւղի վարչութեան մօտ «Անի» պարախումբի ներկայացուցիչ Հրաչ Արքայտարեան:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան

Համազգային «Սանահին» մասնաճիւղի մայիսեան ձեռնարկներ



Շաբաթ, Մայիս 11-ի կէսօրէ ետք, երկու տարբեր ներկայացումներով տեղի ունեցաւ Համազգայինի «Սանահին» մասնաճիւղի «Անի» պարախումբին կրտսերներու տարեկան ելոյթը, գեղարուեստական դեկավարութեամբ եւ Հայրապետական դասնավառի յանձնախումբին: Խոնարհնչեր ելոյթին, տարբեր տարիքի խումբեր մեծ խանդավառութեամբ ներկայացուցին հայկական աւանդական պարեր, ինչպէս՝ «Քոչարի», «Եարիսուշտա», «Շալախօ», «Վէր գէրի», «Վասպուրական», «Ռւրմեցիներու պար» եւ այլն: Աւարտին տեղի ունեցաւ սուրճի եւ անուշեղինի վաճառք:



Ուրբաթ, Մայիս 17-ի երեկոյեան ժամը 6-ին, Համազգային «Սանահին» մասնաճիւղի վարչական կազմն ու Շրջանային վարչութիւնը ներկայ գտնուեցան Քեպէգի Ազատական կուսակցութեան Acadie շրջանի երեսպատճեան Christine St Pierre-ի տարեկան աւանդական հանգանակային ճաշկերոյթին:

Ուրբաթ, Մայիս 24-ի երեկոյեան ժամը 8-ին, «Արմէն Կարօ եւ Շաքէ Կէօնճեան» կեղրոնէն ներս բացումը կատարուեցաւ հայրենաբնակ գեղանկարիչ Մերուժան Խաչատրեանի արուեստի գործերուն: Ցուցահանդէսը շարունակուեցաւ մինչեւ Երկուշաբթի: Այցելուները մեծ հիացմունքով ընբոշնեցին արուեստագէտին հայաշունչ գործերը, որոնք նուիրուած էին Հայաստանի Անկախութեան տօնին:

Շաբաթ, Մայիս 25-ի երեկոյեան ժամը 9-ին, ՀՄԼՄ Կամքի «Հայկ Մարգարեան» մարզասրահէն ներս տեղի ունեցաւ հայրենաբնակ գեղանկարիչ Մերուժան Խաչատրեանի արուեստի գործերուն: Ցուցահանդէսը մինչեւ Երկուշաբթի: Այցելուները մեծ հիացմունքով ընբոշնեցին արուեստագէտին հայաշունչ գործերը, որոնք նուիրուած էին Հայաստանի Անկախութեան տօնին:

Մայիս 30-ի երեկոյեան ժամը 8:30-ին, «Արմէն Կարօ եւ Շաքէ Կէօնճեան» կեղրոնէն ներս, տեղի ունեցաւ «Սանահին» ֆիլմի ակումբի ամսական հաւաքար:


«Sliding Doors» ֆիլմը ներկայացուց ակումբի պատասխանատու ընկեր Վիգէն Թիւքէնքնեանը: Աւարտին ներկաները վերլուծումներ կատարեցին ֆիլմին մասին:

«Սանահին» մասնաճիւղի վարչութիւն



Այցելեց՛ք Թորութոյի ամենօրեայ վարժարանի բարենորդուած կայցեց՛ք / Visit our new website

www.arsarmenianschool.ca



TAILORS & SHIRT MAKERS NEEDED
"Arthur Montreal" Bespoke Tailors & Shirt Makers are looking for experienced seamstress, cutters and tailors. If interested, please call 514-843-0522. Training will be provided.

ԶԵՐԿԱՆ ԱՌԵՎ
Կարմիր կարիքներուն կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱՄԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

ԳՈՐԾԻ ԱՌԵՎ
Կարմիր կարիքներուն կարմիր ունի դերձակներու, կարողներու և ձեռնունքներու: Հետաքրքրութեամբ կը նաև հայտապես արհեստի:

arthur
MONTRÉAL

«Սուրիահայութիւնը անգամ մը եւս փաստեց, որ օժողուած է վճռակամութեամբ»
Հարցազրոյց ՀՅԴ Բիւրոյի Աերկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատրութեանի

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատրութեանի Սուրբիա այցելուրեան ուրախ առիթը օգտագործելով, «Գանձասար», «Ռատիօ Երազ» շին հետ գործակցարար, հետևեալ հարցազրոյցը ունեցաւ ընկերոջ հետ, ընթերցող ներք իրազեկ դարձնելու ՀՅԴ-ի մօտեցումներուն՝ համահայկական կարեւորութիւն ներկայացնող շաքր մը հարցերու շուրջ։ Սառը կը ներկայացնենի հարցազրոյցը։

Զ.Պ.- Վերջերս կը տեսնենի Արցախի եւ Հայաստանի միջեւ բաժանարար գիծեր ստեղծելու փորձեր, յատկապէս իշխանութեան շրջանակներուն կողմէ։ Միւս կողմէ, սակայն, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինը Մայիսին կը կազմակերպէր «Հայաստան-Արցախ Ռազմավարական Դաշինք»ի ֆորումը։ Կը պարզաբանէ՞՞, խնդրեմ, թէ այս դաշինքը Արցախի ապահովութեան եւ անվտանգութեան առնչուող ինչպիսի՞ հարցեր պիտի լուծէ, ե՞ւ ի՞նչ պիտի ըլլայ Արցախի, Հայաստանի եւ Սփիւռքի դերակատարութիւնը այս գործընթացին մէջ։

Յ.Տ.- Նախ ըսեմ, որ գիրախտաբար ճիշդ էք: Այսօր Հայաստանի եւ Արցախի իշխանութիւններուն միջեւ կայ որոշ չափով լարուած միջնորդոր մը, որ մեզի համար շատ մտահոգիք է: Մտահոգիք է, որովհետեւ մենք կը հաւատանք, որ մեր երկու հայկական պետութիւններու իշխանութիւնները պէտք է միշտ համադրաբար աշխատին, ինչպէս կ'ըսեն՝ կառքը նոյն ուղղութեամբ քաշեն: Այս մտահոգութիւնները մենք յայտնած ենք երկու հանրապետութիւններու իշխանութիւններուն ու պատրաստ ենք խաղաղ յատուկ գեր, որպէսզի մեղմենք այդ, որովհետեւ արդէն գիտէք, որ չուտով Արցախի մէջ առաջին անգամն է, որ տեղի պիտի ունենան ընտրութիւններ, 2019-ին՝ տեղական ինքնակառավարման, իսկ 2020-ին՝ Ազգային ժողովի եւ նախագահի միաժամանակ: Ուրեմն քիչ մը համբերութիւն պէտք է, այնուհետեւ կը յատականայ արդէն ընդհանուր կացութիւնը եւ կը յուսամ, որ բոլորս պիտի լծուինք շինիչ աշխատանքի: Ներկայ վիճակը, լարուած միջնորդար, փոխադարձ ամբաստանութիւնները միայն ու միայն մէկ հետեւանք կրնան ունենալ, այն ալ մեր թշնամին ուրախացնելն է:

Գալով ֆորումի գաղափարին, մենք այդ գաղափարը ներկայացնեցած էինք հանրութեան, մտաւորականութեան, ներկայացնեցած էինք նաեւ իշխանութեան՝ բնդհանուր գիծերու մէջ, որովհետեւ յայտնած էինք, թէ մանրամասնութիւնները պիտի ճշգույն համահայկական առումով։ Այս իսկ պատճառով, քաջիմանալով, որ Դաշնակցութիւնն է այս ծրագրին մղիչ ուժը, պիտի նախընտրէինք, որ սա միայն Դաշնակցութեան նախաձեռնութիւնը ըրլայ:

իրականութեան մէջ ի՞նչ է փնտռուածը: Իսպա-
մաքաղաքական գաշինքի ստորագրութեամբ մէնք կը
կարծենք, որ ուզգմավարական առումով շատ աւելի պի-
տի կանոնաւորուի Հայաստան-Արցախ քաղաքական եւ
ուզգմական համաձայնագրերու հարցը: Որովհետեւ
կասկած պէտք չէ գոյութիւն ունենայ բոլորիս համար,
որ Դաշնակցութեան վերջնական նպատակը Արցախիը
միացնելն է Հայաստանին, բայց մինչեւ Հոն Հասնիլը,
մանաւանդ նկատի ունենալով, որ բանակցային գոր-
ծընթաց գոյութիւն ունի, մենք պէտք է կանոնաւորենք
այդ յարաբերութիւնը, որովհետեւ եթէ աշխարհի առջեւ
մէնք կը ներկայացնենք սա որպէս ինքնորչման իրա-
ւունքի եւ ճանաչման միտում Արցախի համար, պէտք է
յստակօրէն ընդգծենք նաեւ, թէ ի՞նչ է Հայաստանի
գերը այս ուղղութեամբ: Երբեմն կը հնչեն արտառոց
գաղափարներ, որոնք մեզ կը մտահոգեն: Օրինակի հա-
մար, թէ իսկապէս ո՞վ իրաւասութիւն ունի Արցախի
անունով խօսելու, թէ արդեօ՞ք պէտք է գտնենք բա-
նակցային գործընթացի նոր ձեւեր, նայած թէ ի՞նչ են
այդ նոր ձեւերը:

Մեր պնդումն այն է, սակայն, որ մինչեւ այդ վախճանական նպատակը, որուն բոլորս կը ձգտինք, պէտք է կանոնաւորել գործակցութիւնը, որպէսզի պաշտպանութեան եւ քաղաքական իմաստով Հայաստանի նեցուկը Արցախին «տէ Քաքթօ» վիճակէն վերածենք «տէ Ժրէց» վիճակի, այսինքն զայն իրաւական դաշտ մղենք եւ այդ ընենք դաշնագրով։ Ուսումնասիրած ենք համաշխարհային քանի մը փորձեր։ Կայ նախընթաց, որ այսպէս կոչուած չճանչցուած պետութիւններու հետ դաշինքներ կարելի է կնքել։ Կուզենք, որ նման ծրագիր իրականանայ նաեւ Արցախի պարագային։ ՄԵնք պատրաստ ենք աշխատելու, որպէսզի այդ դաշնագրի բնագիրը գործի վերածուի, տեսք ստանայ։ Այս ուղղութեամբ կազմեցինք կազմկոմիտէ, որ իրականութեան մէջ ձեռով մը կազմակերպիչ յանձնախումբ է, որուն մաս կը կազմեն այլազան հոսանքներէ ներկայացուցիչներ։ Ուրախ ենք նաեւ, որ այդ Փորումին մասնակցեցան «Քաղաքացիական Պայմանագիր»։ Են անհատներ։ Բնական է նաեւ, որ մենք չէինք ակնկալեր, որ առաջին գիծի վրայ ըլլար Արցախի իշխանութիւնը,

որովհետեւ կ'ուզէի՞նք, որ սա ըլլայ համաժողովրդական նախաձեռնութիւն:

Զ.Պ.- Ինչպէս կը պատկերացնեէք Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնները, յատկապէս Սփիւռքի Նախարարութեան լուծարման լոյսին տակ։ Մերա Ծիգմները կարեւո՞ր են այդ յարաբերութիւններուն արդիւնաւորման համար։

Յ.Տ.- Մենք, նախորդ իշխանութիւններու օրով,

միշտ ալ չետած ենք, որ պէտք է Հայաստան ունենայ Սփիւռքի Նախարարութիւն, ոչ թէ որովհետեւ այս մեքանիզմը լաւագոյն ձեւն է, այլ պարզապէս այն բանի համար, որ Հայաստան աշխարհին ցոյց տայ, թէ ինք կարեւորութիւն կու տայ Սփիւռքի հետ յարաբերութիւններուն, որ այդ յարաբերութիւններուն մշակումն ու իրագործումը կ'ուղէ կատարել նախարարական մակարդակով: Սա չատ կարեւոր էր: Գիտէք, մեծ Սփիւռք ունեցող շատ մը պետութիւններ այլազան ձեւեր գտած են իրենց Սփիւռքին հետ յարաբերութիւններ մշակելու համար: Լիբանանի պարագան միտք կու գայ, Ֆրանսա եւ Իտալիա նոյնիսկ ընտրութիւններ կը կազմակերպեն իրենց սփիւռքներուն մէջ: Ուստի այս ամբողջ ծրարը պէտք է ուսումնասիրուի: Մենք կը կարծենք, որ Սփիւռքի Նախարարութիւնը եթէ նման լուրջ ծրագրեր մշակելու ընթացքին մէջ ըլլար, այո, Հաւանաբար լաւագոյն ձեւն էր արդիւնաւորելու այդ յարաբերութիւնները, զանոնք դուրս հանելով ցուցական մակարդակն, աւելի խորքային դարձնելով: Այլ խօսքով մենք համաձայն էինք, որ Սփիւռքի Նախարարութիւնը մնար եւ շարունակէր իր գործը, թէեւ հարիւր տոկոսով իսանդավառ չէինք Սփիւռքի Նախարարութիւն ցարդ տա-

րած աշխատանքով: Պարոն վարչապետին փոխանցած էինք, որ մեր մօտեցումը հետեւեալն է՝ եթէ զոյութիւն ունին սխալներ, միասնաբար նստինք, սրբագրենք զանոնք, եւ ինչ ալ ըլլայ ամենայնդէպս Սփիւռք-Հայաստան կապերու զարգացման ձեւաչափը՝ նախարարութիւն, յանձնակատարի ծջում, թէ այլ, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու կանոնաւորումը պէտք է ըլլայ խորհրդակցութեան ճամբով: Տարօրինակ էր, սակայն, որ միայն որոշումներ առնուելէ ետք առաջարկներկայացուեցաւ, որ նստինք ու խորհրդակցինք: Մենք հարց տուինք, թէ ինչի՞ մասին պիտի խորհրդակցինք, երբ հիմնական ուղղութիւններն ու որոշումները որդեգրուած են արդէն: Իշխանութիւնները նկատի առած են թեկնածու մը, պիտի նշանակուի գլխաւոր յանձնակատար մը, այլ իսօսքով՝ high commession, որ պիտի աշխատի ուղղակիօրէն Վարչապետարանի հսկողութեան տակ: Վարչապետը կը հաւատայ, որ ատիկա պիտի բարձրացնէ Սփիւռքի հետ յարաբերութիւններուն մակարդակը: Մենք տակաւին վստահ չենք, թէ այս ձեւը կարդիւնաւորուի, այնուհետեւ պատրաստ ենք տեսնելու, թէ ուր կը հասնի այս ծրագիրը: Սոսկ դիտորդի գերը պիտի չկատարենք, ընդհակառակը՝ պատրաստ ենք ձեռքով-ոտքով աշխատելու, որպէսզի իրողապէս արդիւնաւորուին յարաբերութիւնները:

Սակայն երկու մտահոգութիւնը ունինք. առաջինը այն է, որ երբեմն ձայներ կը լսուին վարչապետին մօտիկ շրջանակներու կողմէ, որ պէտք է վերակազմակերպել Սփիտոքը, Սփիտոքը հասցէ չունի: Այն նոյն բանը, զոր կը լսէինք մօտաւորապէս 90-ական թուականներուն, կը կարծենք որ այլեւս հինգած հասկացութիւն է: Սփիտոքը հասցէ ունի, Սփիտոքը ունի աշխոյժ կառոյցներու տէր շարք մը կազմակերպութիւններ, որոնք համահայկական նկարագիր ունին: Ուստի պէտք է զօրացնել այդ կառոյցները, եւ ոչ թէ յանկարծ ստեղծել անիմաստ կառոյցներ: Ուրախ եմ յայտնելու, որ Սփիտոքի տարածքին մենք՝ ուր որ կրցած ենք յառաջացուցած ենք միացեալ յանձնախումբեր, շտապներ կամ միասնական աշխատանքը համադրող մարմիններ՝ տարբեր անուններով, տարբեր պիտակաւորումներով: Անոնք յաջող տարբերակներ են: Ֆրանսայի օրինակը լաւ է, Գանատայի մէջ կանոնաւոր հանդիպումներ տեղի կունենան, Ամերիկայի մէջ յատուկ առիթներով տեղի կունենան այդպիսի հանդիպումներ, Եւրոպայի որոշ քաղաքներու մէջ միացեալ աշխատանքը բաւական թափ ստացած է, Լիբանանի եւ Սուրբիոյ պարագային գրեթէ մնայուն յանձնախումբերու կամ շտապներու հարց գոյութիւն ունի: Ասոնք ուրախալի երեւոյթներ են, զորս պէտք է քաջալերել եւ ոչ թէ քանդել ու նորը ստեղծել: Ամենայնդէպս, եթէ նոյնիսկ նորը պիտի ստեղծենք, այդ պէտք է ըլլայ համահայկական բոլոր կազմակերպութիւններուն համախուութեամբ, ոչ թէ թելադրութ չայստանէն: Սա առաջին կէտան է, երկրորդը այն է, որ խսկապէս, եւ ասոր մէջ արդարացի է իշխանութեան մօտեցումը, պէտք է Հայաստան-Սփիտոք յարաբերութիւնները ըլլան խորքային, ոչ թէ առերեւոյթ, չսահմանափակուին շուտերով, չըլլան համաժողովներ կազմակերպելու սիրոյն, այլ ըլլան այնպիսի գործնական դրսեւորում ունեցող համախմբումներով, որոնք ունենան յստակ ծրագիր (action plan), որուն հետապնդումը

արութի, օրինակ, մարմինի մը, որ կազմուած ըլլայ պետութէան ներկայացուցիչներէ եւ Սփուռքի ներկայացուցիչներէ, իսկ բոլոր կողմերը հսկեն, որ այդ մարմինները արդինքի համեմին: Այս գլխուն տակ կ'ուզե՞մ յիշել նաեւ, որ մենք փոխանցած ենք իշխանութեան տարբեր մակարդակներուն ներկայացուցիչներուն, որ վերջին շրջաններուն, ոչ միայն այս իշխանութեան օրով, երկբաղաքացիութեան դրութեան հաստատումը ողջունելի կը գտնենք: Գիտէք որ Դաշնակցութիւնը պայքարեցաւ անոր համար: Հետագային, սահմանադրական փոփոխութիւններու օրէնքներու նախագիծով աւելի ու աւելի սահմանափակուեցաւ սփիւռքահայերուն մասնակցութիւնը Հայաստանի քաղաքական կեանքին: Օրինակի համար ամէնէն կարեւոր պաշտօններուն համար, նոյնիսկ ուստի ժամի կամ մետիայի վրայ հսկող մարմիններուն մէջ, երկբաղաքացիներ չեն կրնար ընտրուիլ: Այսինքն Սփիւռքի ներկայացուցիչը եթէ Հայաստան տեղափոխուած է եւ կ'ուզէ գործուն մասնակցութիւն բերել տեղւոյն քաղաքական կեանքին, պէտք է վերադարձնէ իր երկրորդ անձագիրը: Այն ժամանակ մենք մեզի հարց կու տանք, թէ ի՞նչ կը մնայ երկբաղաքացիութենէն, որովհետեւ գիտէք շատ մը սփիւռքահայեր պիտի չուզեն այդ ընել: Ուստի, քանի որ միաժամանակ Հայաստանի քաղաքացիներ են, պէտք է ունենան լիիրաւ իրաւունք մասնակցելու քաղաքական կեանքին: Շատ մը երկիրներու մէջ այլպէս է կացութիւնը: Լիբանանի պարագային ինդրոյ առարկան թէ պատգամաւոր կրնայ ընտրուիլ եւ թէ նախարար կրնայ նշանակուիլ, անկախ այն բանէն, թէ քանի՛ քաղաքացիութիւն ունի, բաւական է որ ինդրոյ առարկան լիբանանի քաղաքացիութիւն ունեցած ըլլայ:

Զ.Պ.- Զեր այցելութեան ընթացքին բանի մը
անգամ շեշտեցիք, որ ՀՅԴ Բիւրօն զօրավիգ պիտի
հանդիսանայ սուրիահայութեան վերականգնումի
աշխատանիներուն: Ինչպիսի՞ տպաւորութիւններ ու-
նեցաւ Զեր այս այցելութեամբ եւ ինչպիսի՞ օժանդա-
կութեան կարիքը կը նախատեսէք:

Յ.Տ.- Շատ ճիշդ էք: Այցելութեանս Հիմնական
նպատակներէն մէկը նաեւ այն է, որ մեր մարմիններու,
միացեալ յանձնախումբերու կամ յարանուանութիւն-
ներու պետքրուն հետ քննենք, թէ ինչպիսի՛ կարելիու-
թիւններ կան, որոնց հրման վրայ որոշ չափով փակուած
կարելի է համարել օժանդակութէան էջը, եւ բանալ վե-
րականգնումի մէկ այլ էջ: Գիտենք նաեւ, որ Սուրբիոյ
կառավարութիւնը յայտարարած է, որ պատրաստ է
մասնակցելու վերականգնումի աշխատանքներուն,
բարեացակամ դիրքորոշում ունի հայութեան նկատ-
մամբ յատկապէս: Միեւնոյն ատեն բնականաբար
կ'ակնկալէ, եւ սա արդար ակնկալութիւն է, որ հայու-
թիւնն ալ մասնակցի այդ աշխատանքներուն: Մենք
չնորհակալ ենք Սուրբիոյ պետութենէն, որ, օրինակ,
Սրբոց Քառասնից Մանկանց Մայր եկեղեցոյ նորոգու-
թեան առիւծի բաժինը ստանձնեց եւ սա շատ ողջունելի
նախաձեռնութիւն է: Ուսիմն մէնք աէտք է ծրագիր

սալամանևություն չ: Առան սաստ պէտք է օրագրի մշակենք՝ տեսնելու համար, թէ ի՞նչ կարելի է ընել, որ ձեռք-ձեռքի տուած, թէ պետութեան հետ, թէ համայն հայութեան հետ գործակցաբար, ծրագրեր կեանքի կոչենք ու վերականգնումի աշխատանքներու սատարենք, նպատակառուղղենք մեր աշխատանքները վերականգնումին: Այցելելով Սուրբիա ուրախութեամբ կը հաստատեմ, որ այս երկիրը սկսած է արդէն վերականգնումի աշխատանքները: Այցելեցի «Տիգրանեան» շէնքը եւ տեսայ, թէ ինչ լաւ վերակառուցած ու զայն վերածած են երիտասարդդական կեդրոնի: Հոյակապ էր, պէտք է խոստովանիմ, որ Սփիւռքի մէջ այդպիսի օրինակներ շատ չկան, ուր երիտասարդութեան տրուած է ամբողջ յարկ մը, ուսանողականին տրուած է ուրիշ յարկ մը, լրիւ նորոգուած, բազմաթիւ սենեակներով, գրադարաններով, ժողովարաններով, հաւաքավայրերով: Խաղի, սորվելու եւ ընթերցումի միջոցներ տրամադրուած են երիտասարդութեան: Սա շատ խրախուսիչ երեւոյշ է, որովհետեւ կը նշանակէ նաեւ, որ մեր տեղական մարմինները լաւապէս կը գնահատեն երիտասարդութիւնը եւ անոր կ'ընծայեն ամէն կարելիութիւն, որպէսպի կարենայ այդ հաւաքավայրերը վերածել մեղուափեթակի: Ես շատ ուրախ եմ մեր երիտասարդութիւնը տեսնելով պատնէշի վրայ: Որոշ մտահոգութիւն ունէի, որ այս երկար պատերազմէն ետք, որոշ յուսալքում յառաջացած ըլլար այս գաղութին մէջ: Փառք Տիրոջ, սակայն, այդպիսի բան չտեսայ: Ընդհակառակը՝ ես, ինչպէս գրեցի մեր ընկերներուն, ականատեսը եղայ վերածաղկող սուրբիահայութեան: Առայժմ գոնէ հալէպահայութեան: Շուտով կ'այցելենք նաեւ Լաթաքիա, Քեսապ եւ այն: Եթէ այսպիսի ընդհանուր մօտեցում կայ, դուք անդամ մը եւս փաստած կ'ըլլաք, որ օժտուած էք հայութեան յատուկ տոկունութեամբ ու զնուակամութեամբ, եւ զանոնք վերածած էք իսկական գործի:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ ԶԱՐՄԻԿ ՊՕՂԻԿԵԱՆ

Armenia marks back to back wins in Euro 2020 qualifiers

YEREVAN—Armenia's National Soccer team beat Liechtenstein 3 to 0 in Euro 2020 qualifier match that took place on June 8 in Yerevan. Then travelled to Athens where they beat the Greek team 3-2 on June 11.

Against Liechtenstein, Gevorg Ghazaryan marked the first goal in the 2nd minute following an assist from Varazdat Haroyan. Alexander Karapetyan scored another goal in the 18th minute. Tigran Barseghyan wrapped up the match with an-

other goal in the 80th minute.

The match against Greece was less lopsided, as Armenia had to wait until the 77th minute for its winning goal by Tigran Barseghyan. Alexander Karapetyan had opened the score at the Olympic Stadium in Athens in the 8th minute and Gevorg Ghazaryan added a second in the 33rd minute. Tigran Barseghyan sealed the victory with a third goal in the 77th minute.

With six points Armenia currently is 3rd in Group J.

Defence forces retaliate for killing of Artsakh soldier

YEREVAN—In a military operation over the weekend, Armenian Defence Forces successfully retaliated for the June 1 killing of Artsakh Soldier Sipan Melkonyan by Azerbaijani forces.

Armenia's Defence Ministry spokesperson Artsrun Hovannian took to social media in a rare post announcing that Defence Minister David Tonoyan has bestowed the highest honours on the soldiers who were involved in the retaliatory operation to "avenge the death of Sipan Melkonyan" and praised their conduct.

Ignoring the role that Azerbaijani soldiers played in the 19-year-old Melkonyan's killing, official Baku issued an announcement through the foreign ministry that acknowledged the

death of one Azerbaijani soldier as a result of "diversion operations by the Armenian side."

The Azerbaijani foreign ministry said in its announcement that on the eve of planned meeting by the top diplomats from Armenia and Azerbaijan, mediated by the OSCE Minsk Group co-chairmen, the Armenian side undertook "a regular bloody operation," in an effort to thwart the Karabagh peace process. Official Baku also placed the so-called blame on Armenia and its authorities.

It should be worth noting that the retaliatory operation took place following last week's meeting between Prime Minister Nikol Pashinyan and President Vladimir Putin of Russia in St. Petersburg.

Armenia's Justice Minister resigns

YEREVAN—Amid calls from Prime Minister Nikol Pashinyan to reform Armenia's judicial system, the country's justice minister, Artak Zeynalyan announced his resignation on June 7 in a message posted on his personal Facebook page.

"I have resigned from the position of minister of justice. Assuming the office of a minister in this historic period for our people was a very responsible step, but also a step aimed at having a chance to gradually solve the judicial issues that emerged while conducting human rights activities," Zeynalyan said in his post.

"I am satisfied with this step and would like to thank Armenian Prime Minister Nikol Pashinyan for proposing my candidacy for the justice minister," added Zeynalyan who also thanked the ministry staff "for collective productive and responsible work. I also want to thank the international partners and civil society representatives for the joint work."

After Pashinyan addressed the nation on May 20, calling for the vetting of all judges, Zeynalyan was quick to claim that the process was internationally accepted and announced that

all judges in Armenia would be subject to the vetting process.

Zeynalyan said on May 21 that the vetting will be implemented without discrimination, and individuals will not be targeted.

Another resignation in the judicial system was announced the same day, with the Interim Chairman of Armenia's Supreme Judicial Council Gevorg Danielyan tendering his resignation, which, according to a message on his Facebook page would go in effect on June 10.

Addressing the top judicial body's members, he called for an "thoughtful approach" to his decision, citing the absence of pressing issues in the sector.

"In addition, this shouldn't have come as a surprise to you," he said. "At least as far as I am concerned, I find it necessary to enable the news Supreme Judicial Council to embark on the implementation of judicial and legal reforms."

Danielyan said for around a year he and Gagik Harutyunyan, the chairman of the Supreme Judicial Council who resigned last month, managed to work hard under conditions of heavy workload and frequent "obvious fake news" on the media.

Local elections spell losses for Pashinyan's party

